

ՔՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՔՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ Ա. ԿԱՐՐԻԷՐԻ,

ԵՒ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ Ե. ԴԱՐՈՒ ՔՆԱԴՐՈՇՄԸ



Մովսիսի անձնական գոյութեանն, — ի Ե. դարու, — այնպիսի վաւերական յիշատակարաններ ունիւք ի ձեռին, զորս առանց սկեպտականութեան կարելի չէ յերկրայս արկանել: Թող թէ ուրանալ ի սպառ: Չեմ յիշեր, որ հայկական իրաց տեղեակ քննադատներէ մին՝ այսպիսի ծաղրական փորձ մ'ըրած ըլլայ մինչև ցայտօր. հետևաբար ամէն երկրաւորութիւն և իրաւացի կամ անիրաւ քննադատութիւնք՝ ծանրացած են և կը ծանրանան աւոր անուամբ մեզ հասած պատմագրութեան և այլ գործոց հարազատութեան վրայ: Ուստի երբ կը լսեմք, թէ այս ինչ կամ այն քննադատն՝ ընդունի, կամ մեթօէ զԽորենացին, միշտ անոր Պատմագրութեան հարազատութիւնը, կամ անհարազատութիւնն հասկընալու է:

Գիտելու ենք և այս. բոլոր այն քննադատներն, որք Գուտշմիդէն յառաջ խօսեցան և գրեցին Խորենացոյ Պատմագրութեան վրայ, աւելի մարիբասեան աղբեր վաւերականութիւնը ժխտելու՝ ընդհանուր մատուցն ունէին, քան թէ բոլոր գրուածքը: Գուտշմիդ՝ տիրապէս առաջինն եղաւ, որ Նախ առանձին երկասիրութեամբ և սպա թիբոստեպան համապատմելի հրատարակած յօդուածով՝ քննադատութեան անաչառ րովէ մ'անցնելով Մովսիսի Պատմագրութեան և Աշխարհագրութեան այլ և այլ տեղերը, եզրակացոյց, թէ այդ գործերն իրք է. դարուն գրուած ըլլալու են անպատճառ՝ մի անձանսով Մովսիսի ձեռքով, և Խորոնոյ ծերոյն ընծայուած:

Կը ցախիւք, որ գերմանացի քննադատն իւր մեծ հանճարն և սրամիտ դիտողութիւնքը կարծեա թէ՛ միայն այն պատմական և ժամանակագրական կէտերու վրայ կեդրոնացոյց,

որոնք հակապատմական և հակաժամանակագրական երևոյթն ունին իրք. բայց ինչպիսի՞ ժամանակաց և պարագայից աղբեցութեանք, — նկատելով որ երկաքանչիւրն իսկ մինչև Ժ.Ձ. դար՝ յար ի գործադրութեան էին և փոփոխութիւններ կրած: Միով բանիւ՝ Գուտշմիդ իւր անաչին հեղինակութեամբ՝ մինչև այն ժամանակ շտեմնուած յեղափոխութիւն մի գործեց գաղափարաց, բայց առանց նորանոր աղբիւրներ յայտնելու:

Այս յոյժ կարևոր և արդիւնաբեր դերս այլ Դիւլորիէի արժանաւոր յաշորդին, այն ինքն է Ա. Կարրիէրի պահուած էր, որ այս վերջին տարիներու մէջ՝ անխոնջ ուսումնասիրութեամբք նորանոր և անկարծելի աղբիւրներ լանաց յայտնել Խորենացոյ Պատմագրութեան, իւր նախորդին կարծիքն ամրապնդելու և ընդհանուր կերպով ընդունելի ընելու յուսով: Արդէն՝ ծանօթ են գիտնոց այն յօդուածներն, որոնք յամին 1892 և 1893 հրատարակուեցան Հռոմի մէջ, որոնցմով յարգելի գիտնականը լանաց ցուցնել, թէ Խորենացոյ Ս. Գրքի ՁԳ. գլուխը բանաբաղուութիւն է Մեղրեարտոսի և Կոստանդինուսի Ստեփանոսիանոյ հայերէն թարգմանութեան. և որովհետև յիշեալ գործոց թարգմանութիւնն և խմբագրութիւնն եղած են յէ. դարուն, Փիլի. Տիրակացոյ ձեռքով, ուրեմն անոց բանաբաղն իսկ Խորենացի՝ պէտք է որ գրուած ըլլայ յՂ. դարուն:

Անցեալ տարի՝ Տետաթիմ Սեդեքարով Պարտիան և Մ. Խորենացոյ աղբեցութեան հրատարակութեան մէջ, — յէջ 15—17, — Կոստանդինուսի Պարտիանոս յայն քնազրի համեմատութեամբ ցուցինք հակառակ Կարրիէրի, թէ Փիլի. Տիրակացոյ գործ չէ այն, այլ Դ. դարուն՝ ապրով Էլսիգիմոս վկային, կամ լաւ ևս Եստրիմով Կետրոցոյն:

Անտարակոյս յիշեալ հրատարակութիւնն ինքնին անուղղակի հերքումն էր Կարրիէրի յայտնած կարծիքին. բայց սա՛ առանց հերքուած համարելու իւր նախապէս յայտնած եզրակացութիւնքը, և առանց հերքելու մեր փաստերն՝ ի նպաստ Խորենացոյ, ահա ու-

1. Ուրեմն ենք, որ տարիներ անցնելէն վերջ կը ստիպուին քննադատը այդ ժխտուած աղբեր գոյութիւնը վերստին նստատուել. և զայս ըրած է Լայպզէան Պ. Վէտտեր, առթիւ 80ամեայ յոբելիի Դոկտոր Ռոպոտուցայպետին նուիրած հանդիսադիր Մատենին մէջ: Տես և Հռոմի մատուց 1894. թիւ 4. էջ 91:

րիչ ընդարձակագոյն յօրուածով մ'ևս ելաւ հաստատել իւր առաջին կարծիքը: Այս անգամ Չ. դարու կարծեցեալ զինարանէ մ'աւած է նա իւր գէշերէր, այն է Յուհաննէս մականուանեան Մարտի տամնակագրութենէն քաղուած 16 հատուկորի հատուածներով, զորս համեմատելով Խորենացոյ հետ նոյն կը գտնէ:

Այսպիսի մի խեղճ հաւաքարանի մի դիմելու բուն պատճառը՝ Կարրիէր ինքնին յայտնած է՝ իւր այն գրութեան նախերգանքի մէջ. այսինքն է՝ իր դէմ յարուցուած դժուարութեանցը լուծումն սալու է Չ. դարէն մինչև Բ. դար Խորենացոյ աղերսը ցուցնելու նըպատակաւ, — անհաւան. Հայոցս, որ նորս փաստերն իբրև հիմնաւոր չենք ընդունիր: Բայց ներուի ինձ ըսել, թէ բաց աստի, — և զօրցէ սակէ աւելի, — ուրիշ հեռաւոր խորհուրդ մ'ևս ի մտոյդ դրած է զքննադատը: Աղերսանդրեան, կամ իսկ ևս Չորտիսմոս Ժուսիակոսի (Πασχάλιος) մէկդի թողու, — յորում կը գտնուի ամենայն ինչ. — որովհետև այս գրութեան մի մասին խոր հետախննչն աւելի եղծիլ պիտի լինէր իւր կարծեան և նպատաւոր Խորենացոյն: Սակայն նորս լուծութեան դատապարտած այդ ծանրակշիռ հեղինակութիւնը՝ մենք յառաջ պիտի կոչենք և խօսեցնել տանք ի սէր ճշմարտութեան:

Ժամանակաւ Հոյսի մէջ տպուած հայ բանասիրի մի յօդուածէն, — և նոյն իսկ Կարրիէրի վերջին գրութեան մէջ եղած ակնարկութենէն, — կ'երևի, թէ հայ բանասիրաց կողմէն եղած ընդդիմադրութիւնը յարգելի հայ գիտին հանդիս չեն ըլլար. և թէ նա ինքն՝ այդպիսի ընդդիմադրութիւնները՝ Հայոցս քննադատութեան դեռ մանկական հասակին արդիւնք կը համարի: Սակայն ինձ յիշեան այդպէս չէ. վասն զի իւր ցարկ ի լոյս բերած գրութեան եղան և պիտի լինին հայ ուսումնասիրաց համար իբրև մի մի գրականական խնդրք, որոնք մեզ տիրութենէ աւելի հաճոյք պատճառելու յատկութիւններն ունին: Միշտ անձկանաք և յարգութեամբ կարգազան և գրած ենք անոնց մասին. և այսօր իսկ Վերմագին կը յանձնենք, որ շարունակէ իւր ուսումնասիրութիւնքը: Մենք եթէ ի լուծութեան թողած ըլլայինք անոր յոգուածներն և առանց պատասխանելոյ, այդ հաւատարմ պիտի լինէր արհամարհանալ կամ անտարբերութեան: Պէտք է ըսել և այն, թէ Հայոցս մէջ այսօր կարծուածին չափ մանուկ չէ քննադատութիւնն, այլ դիտէ քաջ հիմնաւորն և գրականը՝ ենթադրականէն նախադաս համարել, և կարծեցեալ նորութեանց իսկ արժանիքը գնահատել: Բայց երբ Կարրիէր, կամ

մի և իցէ եւրոպացի քննադատ՝ հայ պատմագրութեան դժուարուտ սահմաններուն մէջ կ'ուզէ խորամուխ արշաւել, պէտք չէ՞ որ նոյնպէս մեծ կարեւորութիւն տայ անոնց կողմէն յարուցուած իրաւացի խոչընդոտներուն. և մի առ մի հարթելով՝ այնպէս յառաջէ իւր նպատակին: Այո՛, այլ ազգ՝ ճշմարտութիւնը կաշկանդած պիտի ըլլայ, փոխանակ յաղթանակել տալու անոր: Եւ միթէ մի մի իրաւացի խոչընդոտներ չեն՞ ասոնք, երբ կ'ըսենք, թէ Խորենացոյ Պատմագրութեան լեզուն Ե. դարու բովէն թափուած է, ութերորդին հետ զործ չունի. — երբ կ'ըսենք, թէ այդ գրութեան մէջ կան այնպիսի պատմական, քաղաքական, աշխարհագրական և կրօնական ըրուած, կամ խօսուած խնդիրներ, որոնք յաջորդ դարերուն համար գլխովին անհասկանալի կը մնան: Կարծուածէն աւելի Ե, դարու զուտ ճնադրոյժը կրող այդպիսի բաներու վրայ ոչ ազ ոչ զարնոյց, կամ ուսումնասիրոյնց: այլ Խորենացոյ ընդդիմաբանք առ հասարակ՝ հակառակ կէտերը միայն յայտնելու հետամուտ եղան. և յայսմ Կարրիէր իւր նախորդաց շաղկէն բնա խտորած չէ: Իսկ մենք այս կէտերս պիտի գնենք և առաջարկենք Կարրիէրի, պահանջելով անոնց մասին գոհացուցիչ լուծումներ:

Գաղղիացի քննադատն՝ իւր յառաջադրութեան համեմատական ոճին մէջ՝ այնպիսի գրական շաւղ մի բռնած է, որ ենթադրականին հաւասար է. այսինքն է, նա անտես ըրած է, կամ լաւ քս՝ առանց նուաճելու թողուցել է զկին իւր գօրծ փաստերու ստուար բանակ մի, որոնք ուշ կամ շուտ կարող են ստիպել զինք խոնարհել անցնիլ Խորենացոյ յաղթական սրոյն տակէն: Իսկ մենք կ'ուզենք, ընդհակառակն, նախ չափուիլ Կարրիէրի վերջին փաստերու հետ և չափել զայն, որոնք հանդիսն առաջնոց դարձեալ երկու բընագրոց, — այն է Խորենացոյ և Մալալայի, — համեմատութեանց պարզ նմանութեանց և անմանութեանց վրայ հիմնուած են:

Ուրիշ երկու կէտեր ևս կան Կարրիէրի գրութեան և ընդհանուր գրութեան մէջ, զորս հարկ կը համարիմ յիշել աստ: Ա. Խորենացոյ այն ակնարկութիւնքը, զորս միայն, — և եթէ իցէ միայն, — Մալալայի քով գտած է, և առանց բացատրութեան Մալալային ընծայած է իբրև միս և նախկին աղերս. որովհետև նա միանգամ ընդ միշտ միտքը դրած է, թէ Խորենացոյ Պատմագրութիւնը Բ. դարում յօրինուած է, և թէ անոր յունարանութիւնք և անճշտութիւնք իսկ՝ ուղղակի Մալալայի ազդեցութեան արդիւնք են: Սակայն այս պատճառարանութիւնն կարող ենք ըսել, թէ դեռ

Այս զուգահեռութենէս հանուած հետեւեւ թիւնն եթէ հարկ ըլլար գործադրել ի քննադատութեան իրբև ընդհանուր կրննն, այնուհետև ոչ մի պատմական անցքի կամ տեղւոյ նկատմամբ այլ և այլ պատմագիրներ չպիտի միտարանէին, և կամ երբ միտարանին՝ հետևցնելու է, թէ վերինը՝ միշտ իւր անմիջապէս նախորդէն առած է զայն, և ոչ թէ նախ առաջինն, և այլն: Սակայն լուսազոյն կիրառութիւնք սորա հակառակը կը հաստատեն: Վկայութիւնները կը թողունք քննադատին, որ ստուգէ. իսկ մեզք միայն կ'ուզենք ցուցընել, թէ Խորենացոյ յիշեալ տեղւոյն աղբիւրը Մալալաս չէ և չկարէ լինել:

Արդ՝ Խորենացոյ գործածած ճակատ և ճանիթ երկու ձևերէն՝ զորն ևս հարազատ համարելք, Մալալայի ՇՃԱՆՎՈՒՄ ձևէն տառադարձուած չէ. իսկ որովհետև մեր նախնիք՝ Խորենացոյ հետ, իրենց բնագրոց անուանքն այլուր միշտ համապարտ տառերու փոխած են, ուրեմն հետևութիւնն յայտն է: Երկրորդ՝ Պրոկոպիոս 2 մի և նոյն անունը ՇՃԱՆՎՈՒՄ կ'ուղղագրէ, որ Խորենացոյ ճանիթին աւելի մտա է. ուրեմն կամ Պրոկոպիոսի աղբիւրը բոլորովին սխալ տառադարձուցեր է մի և նոյն հասարակաց աղբիւր քով յիշեալ անունը: Արևատիվերացին (Պ. ԺԸ) ճանիթ անտառաց կ'անուանէ Պնտակաս այդ գաւառը: Այսպէս նաև սրբապետ յիշատակարան 2 մի, որ խաչակրաց զվ. Պոլիս առած ժամանակ յու նարէն հին գրուածքէ մի թարգմանուած է, որոյ անունն էր, կ'ըսուէ, Մեծ Բարձր Պարճառն, կամ Պարճառի Խափառարանին կոչումն յիշուողոց, կը յիշէ զճանիթ՝ Տրապիզոնի և Եստիոց (?) այն է Հալիէն Մեծի մտա շէթում Պատմիչ (Պ. ԺԳ) իրբև Բ. գաւառ Պնտակասի կը յիշէ « զվեհել, կամ կենեթ (ճանիթ, ըստ է. Սկ. Ազգերեան), և ի սմա քաղաքն Տրապիզոն: շէթմոյ լատին բնագրի մէջ չի գիտուիր, թէ ինչպէս գրուած էր այս անունս. հաւանորէն Geneti կամ Kyneos էր, և լուսանցքի վրայ ալ Djanoi կամ Tzanoi, զոր Ազգերեան ճանիթ յաւելուածն ըրեր է ի փակագծի: Արդ՝ այս ենթադրութիւնն եթէ ստոյգ է, նոյն համարելու ենք Ստրաբոնի 3 յիշատակած Բενετες (Գենեթք) ին հետ, որուն

համար կ'ըսէ Պլինիոս, թէ համանուն գետին անուամբ այնպէս անուանեցան Պնտոսի այս գաւառացիներս: Ուրեմն շէթմոյ քով յիշու ստակուած կ'ենթին և Ստրաբոնի Բενեτες, կամ մտրը մի կը կապեն անցնելու Պաղովտոսէն 4 յիշուած Κουαυεδος անուան, որ էր կ'ըսէ, գետ մեծ (μεγαλή ποταμός) ի Խաղարիս: Հ. Ար. Սիւրբանն իրաւամբ դիտել կու տայր, թէ « իցէ այս ճանիթ շայր » և Բաց ստաի յիշուելու ենք, որ Ստրաբոն յիշեալ տեղւոյն մէջ ուրիշ անուն մ'ուս կը յիշէ ի Պնտոս, այն է Տάωνοι, զոր ևս կարծեմ ուղղագրել ՇՃԱՆՎՈՒՄ կամ ՇՃԱՆՎՈՒՄ, որ նոյն է Խորենացոյ ճանիթ և Պրոկոպիոսի ՇՃԱՆՎՈՒՄ ձևերուն հետ: Ուրեմն կրնանք եզրակացնել, թէ Խորենացոյ գէթ Սիւրբառահարութեան յիշեալ տեղւոյն աղբիւր եղած են Ստրաբոնի և Պաղովտոսի. և թէ հետեւան. « Եւ ի ճանիթս, որ են Խաղարիք, յորում գետ Մեծաբո Պարճառ », ուղղակի Պաղովտոսէ թարգմանուած է, ինչպէս յունահնչիւնն բառերէն յայտնի է:

Իսկ Խորենացոյ պատմագրութեան յիշեալ տեղւոյն, այն է Տակիտոսի մահուան ի ճանիթ չկարծեմ ըսել, թէ ո՞վ եղած է աղբիւր. այսքանս միայն յայտնի է, որ Եւսեբոս 7, Որոսիոս 8 և Սիսիկեղոս, — որոնց կը համաձայնին նաև Ի. գարում գրուած հայերէն անանուն ժամանակագրութիւնն և Միք. Ստորի, — որոշակի կը ծանուցանեն, թէ Տակիտոս յետ վեցամեայ կայսերութեան սպասուած է Պնտոս: Ուստի ի նկատի առնելով մէկ կողմէն Եւսեբիոսի և Որոսիոսի վկայութիւնքը, միւս կողմէն այլ Եւստատիոսի և Ազատ թիասայ Տάωνοι և ՇՃԱՆՎՈՒՄ անունանց ձամու ձայնութիւնը Խորենացոյ ճանիթ և Մալալայի ՇՃԱՆՎՈՒՄ ին, հաւանական կը համարելք, թէ առաջնոյն կորսուած գրուածքն եղած ըլլայ իրբև հասարակաց աղբիւր երկուս

4. Աշտարիք. ի զուգին Խաչուրի:
5. Տես գաւ. Թարգմ. Աւ. Մ. Խորենացոյ, վեհեթի 1884, էջ 38:
6. Այս անուանց նշմութեան մասին՝ տես Եւստատիոս (in Dionysium), ուր սպասէս կը գրէ. ΟΙ μάκαρωνες ἑσθγος ποντικόν τούτους νόη Σάωνους φαμέν ἰδουαυοῦταρον και Τζάωνος, ὅς καί τήν καλατηνίην καλ-τέγην.
- Իսկ Ազատիոս Hist. V. I, ed. Bonnæ 1828. p. 278. գետ աւելի որոշ կը խոսի խաղարիքայ այս ժողովրդեան վրայ, և կը յիշէ անոնց հնուց ի վեր Հաղմայեցեաց են ունեցած վերաբերութիւնքը:
7. Ժամանակագր. վեհեթի, էջ 301: — Տես նաև սու. Աւերեգ Դեմեթի, Բերլին, 1866, p. 184.
8. Hist. Lib. VII. C. XXIV. p. 523.

Թեան համեմատ պիտի լինին Մալալայի միւս յառաջ բերութիւնք:

1. Գաղազի Պարսի. պատերազմ. Բ. Վ. 39:
2. Պատմութիւն սուրբ Գեղարքան և այլ տօբիւնականաց Գրիգորոսի: Ոսկեգիրքի Ա. էջ 89:
3. Աւ. ԺԲ. Տպ. Ամուրհարամի. էջ 825:

քանչիւրին, գուցէ թէ և յիշեալ հեղինակներուն:

Խորենացոյ Բ. ՀԹ. զլիսում Պոռոս կայսեր զօրաց շիրթուքեան և նորա մահուան պատճառը սով մ'եղած կ'աւանդուի. իսկ ուրովհետև այս բանս միայն Մայրաւայ կը պատմէ իր ժամանակագրութեան 302 իջում. ուրեմն:

Ստուգիւ այս զարմանալի ինքնակայիս թէ ժազման և թէ՛ մահուան մասին պատմագիրք առհասարակ՝ այլեւայ կարծեաց և կուտակցութեան կը բաժնուին: Եւսերեայ, Հերոնիմեան և Զատկ. ժամանակագրութիւնք նորա մահը միայն, բայց բուն պատճառը նշանակած չեն: Ոմանք յԱտորիս մեռած կ'աւանդեն, և այլք ի Սէրօն: Սակայն և այնպէս մենք կարող ենք ցոյց տալ Կարրիէրի՝ Մայրալայն հին մի այլ հեղինակ, այն է Զոսիմոս¹, որ կ'աւանդէ յԱտորիս Պալմիրացոց դէմ պատերազմած ժամանակ զօրաց սովու գտանդի մէջ ինկնալը: Եփրեմիոս² Կ. Պոլսեցի, Կեղբենոս և Զոնարաս այնպիսի պարագաներով եղած կը պատմեն յիշեալ սովը, զորս Մայրալայի քով ընաւ չենք գտներ: Զոնարաս՝ Պատրոսի մահն իսկ՝ Կարոսի և անոր զօրաց դաւանանութեամբ եղած կը պատմէ: Միով բանիւ այս պատմագրաց աւանդածէն յայտնի կը սեանուի, թէ Արևելքի մէջ կամ գրաւոր և կամ անգիր զօրացներ կը շրջէին Պոռոսի մահուան վրայ: Ուրեմն կարծեաց այս կրկին հոսանաց մէջ, չենք հասկընար, թէ Կարրիէր քնչ իրաւամբ լոկ Մայրալայն յառաջ եկած կը համարի յիշեալ հեղինակաց աւանդածները. և եթէ իրօք իսկ այդպէս ըլլար, սակայն զարձեալ պիտի հարցուէր. իսկ Մայրալաս ուստի՞ դիտել զայդ:

Զոսիմոսի պատմութեան ընթացքէն կ'երևի, թէ նա կայսերս մահն իսկ յԱրևելս եղած կը համարէր. բայց դժբաղդաբար անոր յիշեալ և յաւորդ գլուխներուն մէջ ամբողջ էջեր կը պակսին, որով անշուշտ պիտի պարզուէին Խորենացոյ և Մայրալայի զարուհիքը: Բայց քանի որ Ափրիկանոսի, Փիրմիլիանոսի և Զոսիմոսի ամբողջ գրութիւնքը զեռ յայտնուած չեն, կրնանք ըսել, թէ յիշեալ սովու միջոցաբը՝ Պոռոսի մահուան դէպքին հետ միանալու պատճառն, — գէթ

առ Խորենացոյ, — հաւանական է, թէ նոյն իսկ հետեւեալն եղած ըլլայ. այսինքն է, Եւսերիոսի Ժամանակագրութեան, — որուն թարգմանիչ Խորենացին կը կարծուի, — մէկ տեղուայն սխալ հասկացողութիւնը, ուր Պամփիլացցին յիշելով, — ընդ միջարկութեամբ, — Սատուռնինոսի բռնաւորին՝ Անտիոքայ մէջ Հոսովայեցոց դէմ ապստամբին, և Պոռոսի անոր վրայ տարած յողթութիւնը, անդէն կը յարէ, թէ « Ար սպա սպանաւ յԱլամիա »: Սատուռնինոսի համար ըսուածը՝ Մովսէս Պոռոսի մասին հասկըցեր է: Եւսերիոսի ժամանակագրութեան հայերէն թարգմանութեամբ և Մինկեղոսի միջոցով կարելի էր պարզել զայս. բայց դժբաղդաբար կայսերաց պատմութեան այս ընդարձակ մասը կը պակսի առ Եւսերիոսի. իսկ Մինկեղոսին այլ խանգարուած է: Առ այս դիտել կու տանք Խորենացոյ յիշեալ տեղոյն՝ Մայրալայն ունեցած մէկ նշանաւոր տարբերութիւնն ևս. այսինքն է՝ Սէրօն քաղաքը չի յիշուիր աստ, որով Կըթաց պատերազմը հասկանալի կ'ըլլայ. իսկ Մայրալայի քով, ընդ հակառակն, երկիցս կը յիշուի Սիրմին՝ ուր իբր թէ եղած ըլլայ այն պատերազմը, սովն և զօրաց խռովութիւնը, որ հակառակ է պատմութեան: Պոռոսի վարած կայսերութեան ժամանակամիջոցն իսկ նշանակուած չէ Խորենացոյ քով, որով կըրնանք ըսել, թէ Մովսէս այն պատմագրաց կարծեքէն³ էր, թէ Պոռոս իւր ինքնակալութեան շորորդ տարին յԱտորիս մեռած է: Իրօք Խորենացոյ և Անդրէասայ անուամբ մեզ հասած Ժամանակագրութեան մի մէջ կ'ըստի, թէ « Թագաւորեաց ակոս (ուղագրելի է ան) չրք, և սպանաւ ի Պոնտոս »:

Խորենացոյ Բ. ԶԳ. զլիսում կ'ըսուի Կոստանդինոսի համար, թէ « Զոր արարեալ Սէրօնի՝ յալթեաց պատերազմացն: Կարրիէրի ըսածին համեմատ այս լատիներէն բառս փոյն Մայրալասայ քով (յէջ 316-317) կը գտնենք, որ գործածած է այնպիսի աղբիւր մի, որ շատ մեծ նմանութիւն ունի այն ընդմիջարկութեան հետ, զոր ինքը մասնաւոր ըրած է, Սեղեբարոսի վարաց հայերէն թարգմանութեան մէջ: Ուրեմն...

Լաւ կ'ըլլար որ մեր քննադատը պարզ խօսելով՝ ըսէր, թէ Կոստանդինոսի Ստեղծութեան թանաթեան, կամ խաչի երևման հնագոյն Պատմութեան հետ: Նա աւելի ճարտար է բառից գործածութեան, քան թէ եզրակացութեանց մէջ, որ յայտնի նշան է յողգողութեան իր պաշտպանած կարծեացը: Սակայն մենք դի-

1. Ed. Bonnae, 1836. Lib. I. C. 44, 45, 46.
2. Ed. Bonnae, 1840, p. 18, պարսե կը գրէ. « Probus, qui cum dinturnis distineretur bellis, periclitante exercitu commeatuam penuria, jamque deficientibus ob famem viribus, imber commiztus tritico coeoidisse dicitur, coeleste manna multitudini effundens, quo pastus, vires pristinas recepit miles »:

3. Ընդունելի է ընդհանուր կարծեք այն է, թէ 6 ասորի կայսերութիւն վարած է Պոռոս:

տել կու տանք, որ այդ յայտարարութեամբ
 իսկ Կարրիէր ինքն իրեն կը հակասէ. որով-
 հետև առանց երկրայութեան է այսօր, թէ
 յիշեալ երկու գրութիւնքն ևս Պ. դարու գործ
 են, և Պ. Ե. ու Ջ. դարուց մատենագիրք, —
 որպիսի են Կոստանդինոսի Վարդ ճեղի-
 նակն, Չոսիմոս, Սոկրատ, Սոզոմեն և Յ.
 Սթեօցի, — յիշեալ երկու գրութիւններէն
 իսկ օգտուած են: Ուրեմն թէ՛ Մալալաս այն
 աղբերէն կը ճանչնար բառս պի՛նան, ըսել է
 թէ՛ Մալալասէն յառաջ ի գործածութեան էր.
 ուստի ինչ հարկ կայ ապա խորհնացի բա-
 նաքող զենի Մալալասին, հակաժամանակա-
 գրական աշագին սխալ մի գործելով:

Յուցընելու համար, թէ Պ. դարէն ի վեր
 լատին ուրիշ արուեստական ճառերու հետ,
 signum բառն ևս գործածական էր առ Յոյնս,
 յիշենք նախ Եւսեբիոսի վկայութիւնը: Սա
 իւր Եկեղ. Պատմութեան Թ. Թ. գլխում
 կ'ըսէ խաչի նշանին համար, թէ հրամանաւ
 Կոստանդինոսի « ի կապերտի գրոյմեցին
 և եղին ի հրապարակի... Եւ գրեցին ի վերայ
 նորս ի Եղս հռոմէացիքն », այստ է թէ. In
 hoc Signo vince բառերը. զոր և յետոյ հռով-
 մէական բանակն ամէն պատերազմի մէջ ի-
 միասին կը շրջեցընէր: Ստիս և յԱրևմուտս:
 Ահաւարի խորհնացոյ ակնարկածն, զոր և
 ստտած իսկ էր աչքը ի Բիւզանդիոն և լրած:
 Բ. Գեռ մի ուրիշ շօշափելի փաստ ևս կ'ըն-
 ծայէ մեզ Ալեքսանդրէս ճամադագրութիւնն,
 որ պատմելով Արկադիոս կայսեր ժամանակ
 հանդիպած անօրինակ երկրաչարժը, — զոր
 կը պատմեն Յունաց եկեղեցական ինչ պատ-
 մագիրք իսկ, — անդէն կը յարէ, թէ « Ան-
 կաւ Սի՛նան Քրիստոսի, (Σιγνώχριστου) ի բար-
 ձանց Կապետոյին Կոստանդինուպոլսոյ »:
 Այս սեղուոյս համար գիտել կու տայ հմուտն
 Դե- Տրէսէ, թէ « Այստ ոչ այլ ինչ իմանի,
 բայց թէ՛ նշան խաչին »:

Չենք կարծեր, որ Կարրիէր իւր սովորա-
 կան սեռով այս ակնյայտնի վկայութիւնս իսկ
 Մալալայի վերագրել փորձէ. վասն զի այս
 սեղուոյս մէջ գէպքն և պարագայք բուրբոլին
 տարբեր են: Երկրորդ՝ ծանրակիւղ գրուած-
 քիս յոյն ճեղինակն՝ Աստի Մալալայէն սոյն
 բառը մուրաբու ոչ պէտքն ունէր և ոչ իսկ զի-
 սուսն: Ազգային մատենագիրներէն Գր. Նա-
 բեկացին՝ Սալի Ներսիսն մէջ և Գաշաճ թղթի
 ճեղինակն ևս պի՛նան բառը գործածած են,
 փոխանակ խաչագրոջի:

Կարրիէրի համեմատութեան Ե. փաստը
 կը կազմեն խորհնացոյ Բ. Չէ. գլխուն և
 Մալալայի 319 իի հատուածքը, յորս ըսուած
 է, թէ Կոստանդինոս իւր մայրը յիշուա-
 ղէմ գրկեց, որ և գտաւ զհայն « Լանդերթ
 ճի՛նք բէւտ »: Այսից կը հետեցնէ ճանաչա-
 տը, թէ Հայերէնն յունարէնէ թարգմանուած
 է. և թէ առաջնայն՝ յերկրորդէն կախումն ու-
 նենանն սնկէ իսկ որոշ կը տեսնուի. վասն
 զի Հայերէրի սոյն սեղուոյն առաջին խօսքը
 « Չոր արտերալ » զէթ ըստ իմաստին Մա-
 լալայի 317 իիւմ մէջ ըբրուած մէկ անճիշդ
 նախադասութեան կը համապատասխանէ:

Թող ներք մեզ Կարրիէր ըսել, որ մի իս-
 ընանցոյ այս սեղուոյս առաջին բանից՝ Մա-
 լալայի նախընթաց բանից հետ նմանութիւն
 կայ, և ոչ իսկ անկէ հանած հետեւութիւնը
 ճշմարիտ. զի առաջին սեղուոյն մէջ՝ « զոր
 արտերալ » և այլն, խաչի նշանին համար
 գուրցած է, իսկ երկրորդին մէջ՝ Շապհոյ
 ինչգրած դաշինքը կը յարաբերէ Մովսէս
 Գաթճեալ, ենթադրելով իսկ՝ թէ կարծեցալ
 նմանութիւն մի յերկուստեք իրական ըլլար,
 սակայն և այնպէս ինչ նշանակութիւն կրնայ
 ունենալ այդպիսի մի նմանութիւն հանրա-
 ծանօթ իրաց նկատմամբ, որոց վրայ Եւսե-
 բիոսէն սիւսեալ ամէն ինչ պատմագիրք նմա-
 նաձայնս գրած են: Լաւ կը լինէր, որ Կար-
 րիէր այնպիսի ծանրակիւղ խնդրոյ մի մասին՝
 կամ Ստրուց և կամ ընդհանուր սրբազան
 հնութեանց ընծայութեամբ իւր ըսածը հաս-
 տատել, քան թէ ճի՛նք բառի նմանութեամբ:

Սակայն և այնպէս ուրախ ենք, որ այս և
 յաջորդ հատուածոց համեմատութեամբ առիթ
 կու տայ մեզ ցուցընել, թէ խորհնացի այս
 սեղերումս Մալալայէն աւելի՛ Սոկրատէն,
 Սոզոմենէն, նա մանաւանդ Կոստանդինոսի
 Վարդն օգտուած է, զոր նա ինքն գլխովին
 անձանօք եղած կը համարի խորհնացոյն:
 Այս, սորա են այն յունական աղբերքը, յո-
 ըոց կրնանք ըսել Կարրիէրի հետ, թէ հայե-
 ըէնը թարգմանուած է:

Յիրաւի՛ նախ կարգալով Կոստանդինոսի
 Վարդը Ա. գրոց իՐ. գլուխն՝ և Բ. գրոց
 Չ. և Է. գլուխներն, և Սոկրատայ Ա. գրոց
 Գ. գլուխն և Սոզոմենի Ա. գրոց Գ. գլու-

Յ. Այս և Բ. գրոց Չ. գլուխն առած են Սոկրատ և
 Սոզոմեն իրենց յիշեալ գլխոց մէջ աւանդածները. իսկ
 խորհնացիներք ալ կը անչ'ար. վասն զի երկուքն
 յով յիշուած պարագաներն իսկ կը պարունակուին Բ.
 ՉԳ. գլխուն մէջ. սոցի՛նք է « արտմութեամբ » = Սոզ.
 փրոտալ ցեոմսոց, « ի յուն » = Սոզ. ծագ. Մարտի-
 միստաի յիշուածութիւնն և այլն ամանայն յորս նշեա-
 նակաց յով մի և եոյն են:

1. Օրինակ իմ λάβαρον, σύμβολον, & այլն. Sba
 Vita Const. L. I. C. XXXI.

2. Vita Constantini Lib. II. C. 7 etc.

խը, կը տեսնենք անպարտուակ, որ կուտանդիանոսի երեւցած խաչին, — զանիկայ յառավ բերելուն և յաղթութեան մասին աւանդածները բառակիր կերպով կը համաւայնին խորհնացույ Բ. 24. զլիսուն, և նոյն իսկ Սեբեոսորո՞վ Վարոց հայերէն թարգմտանութեան այն տեղոյն, որով կարմիր այնքան գրաւուած է իսկ նկատմամբ խորհնացույ Բ. 21. զլիսուն տեղոյն՝ դիտելու ենք, որ Սոկրատ, Ա. գլ. Ժ, և Սոզոմեն Բ. 21. Ա. կը նկարագրեն Հեղինէի յերուսաղէմ՝ երթալն և խաչը հանդերձ բեռնոց գրտանելը, ուր կը յիշեն և զգիւտ Քրիստոսի գաւտակնոց տախտակին, որ ի խաչին բեռնուելու իսկ որովհետև մինչ ի դարս Վերածնութեան՝ թէ Քրիստոս՝ յորս բեռնոց բեռնագա ի խաչին, ուրեմն իրաւամբ Մովսէս այս հաշուով հնչի բեռն կը յիշէ, որուն՝ զիպուստով Մալալաս իսկ ձայնակիր կը գտնուի։ Այս այս գիտելու է, որ մենք ունինք խաչի զիւտի Պատմութեան՝ նախնեաց կրկին թարգմանութիւններ, մին կ'իւրակուի կամ կ'իւրդի Երուսաղեմացույ վարուց մէջ, իսկ միւսն աւանդին. սորա վերջին մասը աւանդին բեռնաց զիւտի վրայ կը խօսի, և խօսողն է ականատու ոմն։ Չեմ ուզեր հոս պնդել, որ խորհնացույ ձեռքով թարգմանուած ըլլան, բայց կրնամ ըսել, որ Սոկրատայ, մանաւանդ Սոզոմենի հետ քաղ կը զուգընթանան և Մովսէսի ալ ծանօթ եղած են։

Թէ իրաջ Մովսէսի աղբիւրն՝ Սոկրատ եղած է, կամ խաչի զիւտի ինչ պատմութիւնը, և ոչ թէ Մալալաս, նախ դիտելու ենք, որ Մալալաս յիշեալ տեղում կ'ըսէ Հեղինէի համար, թէ և Որ և գտեալ եբբը զպատուական խաչն » (առ. կոստանդիանոս)։ Իսկ խորհնացին կ'ըսէ միայն, թէ և որ և եկեա զպատուական քաջն » : Արդ՝ խորհնացին այստեղ Սոկրատայ քաղ կը համաձայնի, որքան Մալալաս կը տարաձայնի։ Վասն զի ըստ ասելոյ խաչի պատմութեան և Սոկրատայ՝ Հեղինէ խաչի մի մասին հետ բեռնաց մասն մի ևս

յոցեց առ կոստանդիանոս, ինքն ալ յերուսաղէմ վախճանած է։ Երկրորդ՝ Սոկրատայ քով ԷՍՂՈՆ է, որ հաւաստի է Մովսէսի և պատուական քաջն » : Իսկ Մալալաս յաբարծոն ունի խորհնացույ Բ. 21. զլիսուն երկրորդ հատուածին և Մալալայի 319 թիւ երկրորդ հատուածութեան զարով, այսինքն է Շապուհի և կոստանդիանոսի մէջ յիշատակուած դաշինքին, կ'ընդունինք ընդ կարբիէրի, թէ այդպիսի դաշինք մի միւս պատմագիրք չեն ճանչնար՝ բաց ի կոստանդիանոսի Վարդի. սակայն այժմ ինքզիր պատմական ստուգութեան — կամ ոչ, — վրայ չէ, այլ աղբերաց հնութեան, Եթէ Պ. դարու այս հմուտ Հեղինակութիւնս, Շապուհի՝ կոստանդիանոսի հետ ըրած մէկ պատմագրին և յաղթուելու յիշատակած ըլլաւ և անմիջապէս յարէր անոց դասանց պատմութիւնն, ամենայն իրաւամբ պիտի տարակուսէինք սորա հարազատութեան վրայ։ Այսպէս նաև մերս խորհնացի իւր Բ. գրոց 24, կամ 28. գլուխներուն մէջ և թէ որոք ըլլար այդպիսի դաշինքի մի յիշատակութիւնը, այս կերպով պիտի մեկնէինք, թէ այն 40ամեայ դաշինքն ըլլաւ է, զոր կնքեց, — ի Մովսէսին, — Գիւղղետիանոս՝ ընդ Կերսեզի, վարդաբանոսի ձեռքով. և թէ խորհնացին հետեւելով Ազաթանգեղոսի, կոստանդիանոսի ընծայած ըլլալ գայն, ինչպէս Շապուհի Ա. և Կերսեզի գործերն ալ ընծայած են Շապուհի Բ. ին. դիտելով որ պատմաին կոստանդիանոս և Տրդատ իսկ արտթիւն ցուցին յայնմամբ իսկ որովհետև թէ կոստանդիանոսի վարուց Հեղինակն և թէ խորհնացի՝ Կիկիլոյ ժողովէն անմիջապէս վերջ կատարուած 20 ամեակին առթիւ եղած կը յիշատակեն այն դէպքը. — որուն կը համաձայնին ուրիշ պատմագիրք ևս, — ուրեմն ոչ միայն հակառակ չէ այս պատմութեան, այլ ստուգուելով եղած է բարեկամական և արարողական դաշինքի մի պարզապէս, կամ ըստ բնագործ իբրև փորձ քաղաքական դաշինքի մի. և այս աւանդան լու կերպով զանազանուած են երկու Հեղինակաց՝ քով իսկ, բայց ինքն կարբիէր այսպէս հասկացած չէ։

Այսպիսի մի եղելութեան ի վկայութիւն՝ յիշենք մի ուրիշ հնագոյն և հանրածանօթ Հեղինակ, որ դարձեալ կարբիէրի տեսու

1. Առաջին անգամ կ'ըստիւ է Մարտիրոսի եղան, որը երեք բեռնով նկարագրեն զխաչելութիւնն, և սկիզբն տալն այն զազգաբարն ։

2. Ս. կերպիւնոս, Ի ճառի Գորգի Սիմոն և Սիմոնի. կոստանդիանոսի և սլլ Ս. 2 շարք և ինչ քաղաքի և նկարք յատուածով Գով. Աւետարանի (Գլ. ԺԹ. 19) վկայութեան վրայ, Էբր Զատոս առաքապի բեռնեան ինչ կնք բեռն կը պատգամեն։ Այս խնդրոյս նկատմամբ լիովին դրած են Փ. Կ. կարբիս, De Clava. Dominici, Antverpiae, 1670. — և Աբրա Մարտիրոսի, Dict. des Antiquités Chrét. Paris 1877.

3. Առ կոստանդիանոսի Վարոց ընտանք միայն գրեցինք. 'Επειδὴ δὲ, καὶ ὁ Περσῶν βασιλεὺς Κωνσταντίνῳ γυνοῦσθεσθαι διὰ προσβλας ἤθελου, δῶρὰ τε καὶ οὐλοσ σπονδῶν φιλικῶν διαπέμπετο σύμβολα, "Ἐπραττε δὲ τὰς συνθήκας κατὰ τοῦτο Β αλεύς ὑπερβολῆ φιλοτιμῶν τὸν τῆς τιμῆς προαεράμενον κικῶν ταῖς ἀναδόσεσσι" — Ed. Aug. Taurin, 1746, Lib. IV, C. VIII.

Թեմէն վրիպած է. այս ինքն է հռչակաւորն ի Երեւան, որ իւր Βασιλικῶς մակագրած բառնախօսութեան մէջ, յէջ 119, կը խօսի Եպագոյ առ Կոստանդիանոս յղած կեղծաբարական այս դեպատմութեան վրայ. և կ'ըսէ, թէ « Մինչդեռ սա պատրաստէր ի մարտ, նեն գութեամբ դեպանս առաքէր ընծայարերս առ Կոստանդիանոս, որք իբրև տեսան շուք դէժին նմա, և սպառազէնս ի նմանէ խըն գրէին. իբրու այն եթէ վրէժս ի գրացի բարբարոսայն խնդրելոց իցեն, բայց արդեամբ ընդդէմ Հռովմայեցոցն վառել կամէին »:

Իսկուհի ենք նախ, որ իբրանիստ ծանօթ էր Կոստանդիանոսի վարդ. երկրորդ, հեղինակս քաղ կը պարզէ կարծեցեալ դաշինքի կամ դեպատմութեան բուն նշանակութիւնը:

Իրաց վիճակն այսպէս պարզելէն յետոյ, երբ կը կարդանք Մայրալայի յիշեալ տեղում այս բացատրութիւնս. « Եւ պատերազմեցաւ (Կոստանդիանոս) ընդդէմ Պարսից և յաղթեաց և արար դաշինս », ինչպէս ի գարմանանք կարրիէրի վրայ, որ այս խօսքերս իբրև Համազօր՝ Համեմատած է Խորենացոյ. « Քանզի Եպագոս աղաչեաց զԿոստանդիանոս զՊարսից (պատուանունն է — Νικητήν, տես Մոկրաս Ս. ԻԳ.) խնդրել Հաշտութիւն », և այլն խօսքերուն, որովք արամագծապէս կը Հակառակին առաջնոյն, և ազատ թարգմանութիւն են Վարդուհայ Կոստանդիանոսի Գ. Գրքի Բ. գլխու Հետեակ տեղոյն. « Քանզի և թագաւորն Պարսից աղաչաւորս ընծայիւք յղէր առ Կոստանդիանոս... և զայս առ ներ, շէ Գրչն ի նոյն ընդ նմա »: Կարրիէրի Համեմատութեանց մէջ դեռ այսպիսի ուրիշ նայարատուութիւններ կան: Նա չկարենալով Գ. դարու այս վկայութիւնն ժխտել, առ իմաստին Հետ արամաբանութեան կարգն իսկ յեղաշրջած է, ըսելով, թէ Մովսէս այս գրուածքն ճանչցած չէ. մինչդեռ ինքն իսկ կը վկայէ, թէ Կոստանդիանոսի վարդուհայ ուրիշ ոչ որ այդ դաշինքը կը յիշէ: Իսկ արդ — ինչպէս տեսանք, — եթէ Մայրալայի տեղին Խորենացոյ Հետ ամիսարան են, ուրեմն կը Հետեւի, որ Խորենացի Կոստ. Վարդուհայ կի առած ըլլայ զայն, ի Հարկէ և ճանչցած:

Ստուգելի՛ այս և նախընթաց Հատուածոց քննութեամբ յայտնի եղաւ, թէ Խորենացի Կոստանդիանոսի վարդ ճանչցած է. բայց մի ուրիշ ապացոյց ևս ունինք առ այս՝ այսինքն է, դիտած ենք ², որ թէ Մովսէսի և թէ Ա-

զաթանդեղիայ քով՝ Տրդատայ և Կոստանդիանոսի մասին աւանդածներն՝ ըստ ամենայնի Կոստ. Վարդուհայ վրայ ձեւուած են. իսկ արդ այս՝ դիպուածական չի իբրաբար ըսուել. ուրեմն հետևութիւնն յայտնի է:

Իսկ զայրով Մայրալայի՛ պէտք ենք ըսել, թէ կամ նորա աղբիւրն իսկ Կոստանդիանոսի Վարդուհայն է, զոր չհասկնալով՝ ապաւայած է, և կամ Չարի. ժամանակագրութեան մէկ տեղոյն վրայ յիշուած է զիւրն: Իսկ այս դիտել կու տանք Հետեակալը, այսինքն է, նա յիշեալ Հատուածին մէջ Պարսից թագաւորը Տարածարտ կ'անուանէ. առթ' Կոստանդիանոսի նոսր Վարդուհայ մէջ յիշուած Տարածարտ ուրիշ նշանին դիպուածական խանգարումն չըլլալն՝ անկէց իսկ կը տեսնուի, զի ժԳ. գրոց մէջ այլ Տարածարտ չ'անուանուած թագաւորն էր զարե Մայրալայս, որ աղաւաղութիւն է Չարի. ժամանակագրութեան մէջ զործածուած Տարածարտ թագաւորն էր — Եպագոս — Արշակ, կամ Բագարտ. ուրեմն նշանակութիւնը չհակադնարով Մայրալայս, որ թագաւորն էր ևս միւսն բարդեր է: Ուրեմն սակէ կը Հետեւի, թէ Մայրալայի գէթ այդ տեղին Չարի. ժամանակագրութեան նմանուղութեամբ եղած է. յայտնի նշան յետեակութեան:

Կարրիէրի Համեմատութեան Չ, Ի, Բ, և Թ. Հատուածներն կը կազմեն Խորենացոյ Բ. գրոց 2Ը. գլխու ամբողջ երկրորդ մասը, որոց Հետ Համեմատած է Մայրալայի 291, 292 և 320 Էջերու Հատուածները: Այս Համեմատութեան եզրակացուցեր է, թէ զոցս մէջ պարունակուած « անն ճարտարանախնդար յար զն ճարտար անխնդար, բայց ի Չարի. ժամանակագրութեան, որ Մովսէսի պէս Մայրալայի ընտանիքն օրհնակ է՝ բառ առ բառ »:

Գաղղիացի քննադատին եզրակացութեան գծուած խօսքերն ինչ նշանակութեամբ այլ զուրցուած ըլլան, կարի յանդուզն են և անհնչ. որովհետև Հնապատու՛ պատմագրաց և շօշափելի յիշատակարանաց դէմ Հնչուած դատավէճն մ'են և ի Հեռուս գիտնաց. որովհետև ուղղուած է Մայրալայի պէս խեղճ և դեռ անորոշ ժամանակի հեղինակ մի ընծայել ուսումնական աշխարհին՝ իբրև միջ ներկայացուցիչ քիւզանդական խոր Հնութեանց. իբրու այն՝ թէ Մայրալայէն ³, — այսինքն է Չ և

3. Դեռեւելս ենք, որ Յով. Մայրալայս՝ — զոր անուանք Յ. Ամուրագրոցն նա շփոթեցին, — որոշ չի գիտցուի, թէ որ դարուն սարած և զրած ըլլայ: Երբ ժամանակագրութեան թէ և ի անոսի Գուստանդիանոսի 39 տարին, սակայն այդ մի մասն և եթէ է ըստ Հատարած կաց Հատուածի մասն, ալ քի զարեղ կերպով ընդհատուած է իսկ պակասաւոր, կամ կորուսած մասն՝ չի գիտցուի.

1. Թղթոց պատմագրութեան պատճէնի մէջ կը յիշուի Գուստանդիանոսի Եպագոսի:

2. Տես Արշակ, էջ և Իւր Բագարտերն Բագարտի, Վենետիկ 1890, էջ 234-242:

Է դարերէն, — յառաջ ոչ զք խօսած և զը-
րած ըլլար Բիւզանդիոնի շինութեան, Թրա-
կեան Զւոտիպոսի, Աշեք. Մակեդոնացոյն և
Սեւեռոսի արարուածոց և Սորպիէի: և հուսկ
կոստանդիանոսէն ելած փառապանծ նորո-
գութեանց և զարմանագործութեանց վրայ:

Կարրիէրի կարծիքն այս տեղ մանրամաս-
նորէն հերքելը՝ կը նշանակէ ի զուր ժամա-
վանառ լինել, և ընթերցողաց իսկ ձանձրոյթ
պատճառով: Ուստի մենք կը շատանանք աղբիւ-
ները միայն յիշատակել այս տեղ՝ վերոյիշեալ
նիւթոց մասին, զորս քննադատը գիտութեամբ
կամ յանգէտս լուծեան դասապարտեր է:
և կամ Մալալասի բանաբոլ կենթարեր է:

Բիւզանդիոնի շինութեան, Բիւզապայ և Փե-
տալիոնի արարուածոց մասին կը խօսին Տա-
կիտոս՝ Տարեթ. Գիրք ԺԲ, Ստրաբոն՝ Գիրք
Ե, Պոլիբիոս՝ Գիրք Դ, Պլինիոս Ե. գլ. ԼԲ.
Ստանիսոս՝ Թղթ. ԺԳ, Եւսեբիոս՝ ի Գրոնիւ-
նէն, Հերոզիանոս՝ Գ. Գիրք, Եւստաթիոս՝ ի
Դիմիտիոս, Զոսիմոս՝ Բ Գիրք, Հեսեթիոս Մի-
լետացի՝ Մուլտ. Գ. գլ. Դ. և զահեկամք:

Թարգման կամ Սեւերոսեան Զւոտիպոսի,
աղեքանադրեան Սորպիէի, կոստանդիանոսի
Սեւոն, Փարսի, Կրիստի և այլ իրաց մասին գրած
են Ափրիկանոս (առ Գեղղէրի), Ե. դարուն զը-
րուած հին Սորաբիւրնիան կոստանդիանապոլ-
սոյ, Սոկրատոս՝ Բ. գլ. ԺԲ, Սոզոմեն՝ Գ. գլ.
Բ, Սուրիաս՝ ի Սեւերոս, Հեսեթիոս Միլետա-
ցի՝ Հայքնախոս Կ. Պարթ, Պողոս Սարկաւազ՝
(տպ. Կանխիտոսի գիրք ԺԱ. էջ 36), վարդ
կոստանդիանոսի՝ Գ. Պլ. ԵԲ, Մարկեղղիմոս

Թէ մինչև ո՞ր կը նստեր, որով պիտի կարենայիք ու-
րաչև անոր ճշիւ ժամանակամիջոցը: Կարրիէր՝ Զ. դա-
րու ներքնակ մ'ենթադրած և զնո. բայց Հուգերտոս
Հորթոս՝ ընդհակառակն, Մալալայի կրատարակութեան
(Edit. Bonnæ 1881) Յառաջարանի մէջ լռափնդի
փաստերով ցոյց տուած է աղբէն, թէ այդ ժամանակա-
դիրն Թ. չարու սկիզբէն յառաջ գրած չէր կրնար
ըլլար, վասն զի բաց յայտը տեղանք, կը յիշէ նաև
Թեոփիլոս Յամանկոփէրը (ոչ Սեմադացին), որ մտած
է յամբ Տեառն 785. յուսարենն ալ բարբարոսական
բռահք և բացարարութեամբ լի:

Իսկ նորա զրուածքին նկատմամբ նուսեալ շատա-
տանը կ'ընէ վերոյիշեալ դիտականն. " Hisce insuper
addo, mihi esse exploratissimum, nihil aliud esse
Johannis Malelae Chronographiam, quam ex aliis
Auctoribus decerptam rorum *sarragine*, solere
eum verbatim ex aliis transcribere, et Auctores
etiam ab illis citatos, quae ipse legisset, cita-
re », և այս բանները Մալալայի բազմաթիւ փոխառու-
թիւններովը կ'ապացուցանէ, որով մենք տարակոյց կը
լռածուի: Եղն կարծիքը խատտանց վերջերս նաև
Կրոնիոնի (Byzantinische Zeitschrift).

Կոմէս, Զարկ. Ժամանակագրութեան՝ Յաղաթ Սե-
ւերոսի, Լամբրիտիոս ի Սեւերոսն և ի Բաշեկիւն
ԾՁ, Նիկիեի. Կալլիստինէս՝ Թ. գլ. Թ, Կեդ-
րինոս ի Սեւերոս, Զոսիմոս ի Յառաբիւր-
նոն, Թեոփանէս՝ ի նոյն, Պրոկոպիոս՝ Բա-
ղաթ Պարկ. գրք. Ա. գլ. ԻԲ, և հնուծիւնք
կոստանդիանապոլսի:

Պաղատիոնի փոխադրութիւնը համաձայն
Խորենացոյ կ'աւանդեն նաև Հերոզիանոս՝
Ա. գիրք, Զարկ. Ժամանակագրութեան (Ed. R.
p. 664), Կոզիմոս՝ Յաղաթ ԺԳԲ. Կոստանդիա-
պոլսոյ, և Պրոկոպիոս՝ Յաղաթ ԳԲԲ. գրքեր. Ա.
Գիրք:

Այս աղբիւրներս յիշատակելէն վերջ կ'ա-
ռայարկենք Կարրիէրի, որ գէթ այժէ անցնէ
1729ին ի վենետիկ տպուած Բիւզ. Պատ-
մութեան ԻԱ. հատորի Բ. Մասը, այն է
« Constantinianis Christiana, Lib. I et II,
nec constantianis hinc uel hinc uel hinc uel hinc
u. և եթէ մեր ըսածները անճիշդ զտնէ, պար-
տական ըլլանք վերտաին իջնել յայպարէզ:

Կարրիէր՝ ինչպէս տեսանք, գիտելով որ
Խորենացոյ ՁԲ. գլխու ամէն մանրամասնու-
թիւնք ամբողջապէս Մալալայի քով միայն կը
գտնուին, այն պատճառաւ իսկ զնա կը հա-
մարի անմիջական աղբիւր Խորենացոյ, —
այսպէս նաև Զոսիմոսայ, Կեդրինոսի, Պրո-
կոպիոսի, և մանաւանդ որ յոյժ պարմանային
է՛ն նոյն իսկ Զատական ժամանակագրու-
թեան: Սակայն այդ երկու ենթադրութիւնք
իսկ առանց հիման կը մնան, գիտելով նախ,
որ Խորենացոյ յիշեալ տեղայն մանրամաս-
նութիւնքն ամբողջապէս կը գտնուին նոյնպէս
կոստանդիանապոլսի հին Սորաբիւրնիան մի՛
մէջ, — ըստ հրատարակութեան Լամբրիկո-
սի, և Զարկ. Ժամանակագրութեան մէջ, — 284,
266, 265 և զարձեալ 284 յէջ, — ըստ կարգա-
դրութեան Հատուածոց Խորենացոյն, որոնք

1. Այս զրուածքս կրատարակած է Պ. Լամբրիկոս,
որոյ մակադիրն է Descriptio Urbis Constantino-
politanae, secundum quatuordecim regiones.
Parisiiis: Գրութեան ներքնակն անմասն է, բայց
ժամանակն որոշ է, այսինքն է՝ կամ փոքր Թեոզոսի և
կամ Սեբերոսի օրերը գրած է: Այս բանի նախ կը
վկայէ Պեո. Գիւլիոս Գ. Գիրք: Երկրորդ զրուածքս
ԺԱ. զրոց ԺԱ. զխնու մէկ տեղէն, ուր ի ԺԳ. Բա-
շեկի (regione) մէջ մի մտան կեղեղեի կը յիշէ, այն է
Ս. Յովն. Միւլոն, զոր շինեց Թեոզոս միջուկա թեո-
զոսն վերջ Պաղատիոնայ և այլոց շինած կեղեղեիները շին
վերջի: Երկրորդ Թեոզոս թագաւորէն վերջ կեղեղ Ին-
նակացոյ անուանքն և զորքը իսկ նոն յիշուած շին բը-
նաւ: Զորքորդ Ե, Պարթ այս ԺԳ. բաժանուածք Սոկ-
րատ իսկ կը յիշէ Բ. գլ. ԿԷ. ԿԱՄԱՏԱ յորընդմար-
այսպէս Թեոզ. Օրին. ԻԲ. կանոնի մէջ:

բառական կերպով իսկ աւելի կը համաձայնին Մովսիսի, քան Մալալաս: Բ. Բոլոր այդ հեղինակներն՝ վերոյիշեալ իրենն աւանդած ժամանակ, երկիցս կը յայտարարեն, թէ « Բիւզանդիոնն հնութիւնք, Բիւզանդացիք այսպէս սանն »:

Կարբիէրի Զ, Է, Ը, և Թ. համեմատութեանց շրջանակը բոլորելու և Զատկ. յանձնագրութեան հնազոյն ազգերը ըլլայն իբր ի հայրենով ցուցնելու համար՝ ես կը ցանկնայի այս վերջինս ևս դնել առնթեր, հայերէն թարգմանութեամբ. բայց որովհետև յօդուածս քան զչափն պիտի ընդարձակուէր, ուստի ստիպուեցայ անոր մի քանի նշանակուող տարբերութիւնքը միայն ցոյց տալ, որոնք Խորենացոյն կը համաձայնին և Մալալայէն կը հետանան:

Ա. Դիտելու ենք որ Զատկ. յանձնագրութեան (տպ. Բոնի) յ'էջ 284 կ'աւանդէ, թէ Կոստանդիանոս Հռովմէն դառնալով՝ երբ և կաւ ի Դիկովորիակ, երկայն ժամանակ հոն կեցաւ իբրև մայրաքաղաք Բիւզանդիոս: Արդ առաջին համեմատութեան պատկանող այս նախկին տեղեկութիւնս Մալալայի քով կը պակսի գլխովին. իսկ առ Խորենացոյ կայ ամբողջապէս, այր վառն և Կարբիէր համեմատութենէ դուրս թողուցեր է: Բ. Զատկ. ժամանակագրութիւնն, — յ'էջ 284, — Պարթևի փոխադրութեան դէպքն աւանդելէն յառաջ, կ'ըսէ. թէ « Որտե՞ թըւոյնք, — որք ընկալան յաւանդութիւն, — սանն »: Այս բանս ի գուր է որոնել առ Մալալայի. իսկ Խորենացոյն ընդհակառակն ունի այսպէս. « Որտե՞ սանն թէ ...: Երկաքանդիւրին քով իսկ Մալալայի ժամանակագրութեան բնու յիշատակութիւն չկայ: Գ. Զատ. ժամանակագրութիւնն, — յ'էջ 284, — Կոստանդիանոսէն կանգնուած փոքր յիշելէն վերջ, անմիջակայս կը յարէ, թէ « Որ էլ ևս անբեր նոքն ». Մալալաս, ընդհակառակն, ոչ միայն չունի զայս, այլ նոյն իսկ յիշեալ սեան վրայ տեղեկութիւնն իսկ յառաջող անտի փոխ առած կը խոստովանի, ըսելով. Զորտե՞ սանն և Բիւզանդացոց: Կրկին ապացոյցք Զատ. ժամանակագրութեան առաջնութեան: Գ. Անունս Տրատիլիոս (Մտրատիգիոն) երբս մի և նոյն անհիշք ձեռով կը գրուի առ Մալալայի. մինչդեռ Զատկ. ժամանակագրութեան մէջ ընդհակառակն Տրատիլիոս գրուած է. Խորենացոյն ևս համաձայն այսմ Սարթիքի ուղղագրած է: Ըսելիք և զայս, որ Զատկ. ժամանակագրութեան մէջ իսկ, — յ'էջ 265, — ուր իբրև ժողովրդական աւանդութիւն մէջ կը բերէ զայն՝ « անուանեալն Տրատիլիոս » կը գրուի: Այս ձևու եթէ գրուութեան սխալ մ'ենթադրուի,

կարելի է ուղղագրել Սոկրատայ Ա. զլ. ԺՁ. տեղով. սակայն Սուիգաս և այլք իսկ այսպէս կը գրեն: Բառագարտներ՝ Զատկ. ժամանակագրութեան մէջ այս երկույնս ընդհանուր համարելով, ընդարձակորէն շնաց ապացուցանել, թէ Խորենացի յիշեալ տեղին ուղղակի Ափրիկանոսէն առած է. ինչպէս նաև Բ. գրոց ԺԹ. գլխում Հիւրկանոսի յԱնտիգոնոսէն պատուհասակոծ լինելու մի այլ տեղին: Այս կարծիքը պաշտպանենց նոյնպէս Գուտյմիզ 2, ցոյց տալով Խորենացոյ Ա. գրոց Զ. գլխում Պերոգեան Սիրիլլայի վերաբերեալ մէկ տեղին: Գիտելու հնք երբ և կու ուշիվ քննադատներս այլ ճանչնալով հնուդերձ Մալալայի յիշեալ տեղին, մանաւանդ թէ յիշատակելով զայն՝ հակառակն ապացուցին: Իսկ Գեղէր 3 ապացուցած է, որ թէ Զատկայան ժամանակագրութեան և թէ Մալալայի յիշեալ տեղեկաց հասարակաց աղբիւրն եղած է Ափրիկանոս: Գիտնականիս կարծիք՝ նկատմամբ առաջնոյն՝ համարելու է. բայց ոչ նոյնպէս Մալալայի համար: Եւ յիբարև, եթէ րոտ ապացուցութեան Բառագարտներ՝ Ափրիկանոսի քով Տրատիլիոս էր, — զոր ճիշդ օրինակած են Սոկրատ, Խորենացի և մի անգամ այլ Զատ. ժամանակագրութիւնն, իսկ Մալալայի քով ընդհակառակն միւր Տրատիլիոս, այս յայտնի նշան է, թէ Մալալաս ուղղակի Զատկ. ժամանակագրութեանէն՝ առած է այդ ձևը, և ոչ թէ Ափրիկանոսէն: Բ. Եթէ Մալալասայ ժամանակագրութիւնն ստուգուի. դարու սկիզբները գրուած է, դժուար է ենթադրել, որ նա Ափրիկանոս կարգացած ըլլայ ուղղակի. պատճառն յայտնի է: Միով բանիւ՝ այսպէս կամ այնպէս Խորենացի զՄալալաս ճանչցած չէ բնու, և նորա իսկական աղբիւրն եղած է կամ Զատկ. ժամանակագրութիւնն, և կամ Ափրիկանոս: Եւ այսպիսի անակախութեան կայտնի նշան է այն աղբիւրը՝ զոր ունին Զատկակ. ժամանակագրութեան 284 իջի և Սոկրատայ Ա. Գրոց Գ. և ԺՁ գլխոց տեղիքը, — Կոստանդիանոսի ի Դիկովորիակ ընդ երկար բնուակոյն, 20ամանակն հոն կատարելուն, ապա ի Բիւզանդիոն հաստատուելուն, զանիկայ Կոստանդիուպոլիս կամ նոր Հռովմ անուանելուն, և այլն, յիշատակութեանց նկատմամբ, — Խորենացոյ

1. Über das Buch die "Chrie", s. 511-512:
2. Beiträge des alten Orients. p. Է1-52.
3. Africanus II. 136, 152 sqq.
4. Հակառակ չէ մարթ ենթադրել. վասն զի Զատկ. յանձնագրութեան մէջ միւս ձեռով ևս գրուած է: այն է Տրատիլիոս.

Բ. գրոց ՉԸ. զիսու երկրորդ պարբերու-
թեան հետ: Սոկրատայ յիշեալ տեղիքը մենք
դիտմամբ համեմատած էինք¹ խորնասցւոյ
հետ՝ Սելէտորայ Ստրոբոնիան-Ռենն անկախ
լինելուն իրբև պարզ եղելութիւն մի: Կար-
իիւր փոխանակ լուրջ կերպով խորհելու գործ
մասին՝ ձեգնութեան իսկ ենթարկած է: Սա-
կայն մենք առանց հեգնութեան կրնանք ը-
սել, թէ յիշեալ համեմատութիւնք Չատկ.
ժամանակագրութեամբ ևս քան զևս զօրա-
ցած՝ Մարլայտէն ունեցած անկախութիւնն
իսկ անժխտելի կերպով կ'ապացուցանեն. և
թէ Մարլայի դիպուածական հեթեթանաք
ժանրաբնուած քննադատութիւնք՝ այդու
իսկ հարկ է որ գթեն և ինկնան:

Յայս վայր ըրած գիտողութիւններէս ար-
դէն տեսնուեցաւ նաև Չափ. ժամանակագրու-
թեան հետքիւնը. բայց Մարլայի պատրուակն
և քննադատի պատրանքն ևս միանգամ ընդ
միշտ վերցնելու համար, կը յաւելուէք նաև
հետեւեալ տեսութիւնը: Այն գիտնականներն՝
օրոքէ Հենր. Վալտերսի, Սկալիգրիի և Պե-
տաուիտի հետ առիթ ունեցան խօսել և գրել
այս ժանրակիր գրուածքիս վրայ, ի սկզբան
ճիշդ գաղափար մի յայտնեցին: Պետաուիտս
նկատելով զայն իրբև արտասովորութիւն միոյ
հեղինակի, մանաւանդ հանդիպելով հոն Յուս-
տինիանոս կայսեր անուան, եզրակացոյց թէ
այդ ժամանակամիջոցին, զուցէ թէ առ Հե-
րակլիտ գրուած ըլլալու է: Բայց սրամիտ
Հոպսթեյնտի հետ՝ Պե-Պրեմէ և Վիլ-Կանֆ իրա-
նակաճ իսկ յիշեալ զօրծի կրկին հրատա-
րակութեանց² հետաւից Ներամութեանց մէջ
չօչափելի փաստերով ապացուցին, թէ իրաք
երկու իրարմէ տարբեր մասունք են, այլևայլ
ժամանակաց մէջ և հեղինակի ձեռքով զը-
րուած, օրոք յետոյ խմբագրեցան ի մի:
Չատկ. ժամանակագրութեան Ա. մասը՝ կը
վերջնայ, կամ կ'ընդհատի Մեծին կոստան-
դինոսի որդւոյն կոստանդիոսի 17 տարին,
այն է յամի Տեառն 354, հետեւալ խօսքե-
րով Էլծօն Ածոյժստ: Այս թուականն իւր-
զուած է և անոր հեղինակի կենաց թելն,
որուն ո՞վ ըլլալը դեռ խնդրական է. բայց
յիշեալ գիտնականաց կարծիքով՝ Հիպոլիտոս³

եղած է, — ըստ մանրագին համեմատու-
թեանց, — որ սակայն օգտուած է Հերոնի,
Կիւրդի Սկիթացւոյ և Ափրիկանոսի ժամա-
նակագրութիւններէն:

Իսկ Բ. մասն՝ մօտ յամն 620-630 գրուած
կը կարծուի, ըստ ոմանց Պերթ Պիտիւտի,
բայց Ս. Մաքսիմոսի ձեռքով: Իսկ որովհե-
տե խնդրոյ նիւթ եղած տեղիքն՝ առաջին մա-
սին մէջն են. ուրեմն հետեւութիւնն յայտնի է:

Ճիւրորդ համեմատութեամբ կ'եզրակացր-
նէ քննադատը, թէ Հապոնոս ներքինապե-
տի արկածի մասին՝ Մարլաւս եղած է աղ-
քիւր խորնասցւոյ, զի հնազոյն պատմիչը ըը-
գիտեն զայն՝ Չատկ. ժամանակագրութեան
և կեղրենոսի քով ևս կը գտնենք զայն. բայց
երկուքն իսկ Մարլայէն առած են:

Սակայն մենք Ամմ. Մարիեղոսէն գիտենք,
թէ սուռգիւ դեռ ուրիշ նշանաւոր անձինք
ևս գոչ եղան Վաղենտինոսի խառապա-
հանջ օրինապահութեան, ևս և տարապայման
ցատկոտութեան. և իրաք Հաւատարիմ պատ-
մագիրս փոխանակ Հռոգանոսի՝ Պիլիպոսն
մատակարար իլլիրիոյ՝ թեթև յանցանքի մի
համար հրով այրուած արկածն է, ի՞նչ բրոց
է. զիսում: Սուրիզաս, և Չոսիմոս իսկ՝ ա-
ռանց սնուան Հառաանոսի արկածը կը հա-
մնաօտեն, եպիեթով զուղղադաւան կայսրը:
Չոսարաս՝ Հռոգանոսի արկածը տարբեր պա-
րագպով մէջ կը բերէ, զոր կարբիէր յիշած է:

Իրն յինքեան պատմական ըլլալով, շատ
միամիտ ըլլալու է մէկն՝ հաւատարիմ համար,
որ Մարլաւս առաջին անգամ հնարած ըլլայ
այն արկածն, և Չատկ. ժամանակագրու-
թիւնն ևս այլք անտի առած ըլլան: Մենք
ընդհակառակն կարծենք, որ Մարլաւս յոյն
կամ լատին ալբիւրէ մի առած ըլլայ իր
աւանդածը: Առ այս դիտել կու տանք, որ
Մարլայի քով Վաղենտինոսի՝ Յալեւտիս-
նոճ և Վաղէս՝ Եձիլիս ձեւերն առած են. մինչ-
դեռ Չատկ. ժամանակագրութիւնն, կեղրե-
նոս և Չոսարաս Օսալեւտիսնոճ, Օսձիլիս կ'ուղ-
ղադրեն, որոց կը համաձայնի խորնասցի:
Սա՝ եթէ սուրգիւ Մարլայէն թարգմանած
ըլլար, անտարակոյտ Բաղենտինոս և Բաղէս
պիտի տառագրէր, — ինչպէս այլուր կը գրէ
Խալիսոս — Սակայն ինչպէս ի հետեւալն
պիտի տեսնենք, խորնասցի այնպիսի պարտօ-
նական գրութիւններ ևս ունեցած է Վաղեն-
տինոսի և Վաղէսի՝ Հայոց վերաբերութեամբ
գորս Մարլաւս չէր ձանաչեր: Իսկ Մարլա-
լոսի ալբիւրէ՝ կամ Խապոսի՝ Տարեբոսիանի
(Fasti Consulares) եղած են հաւանօրէն և
կամ Որոսիոս. և իրաք ստոր ապացոյց կրնայ
ըլլալ Մարլայի ՃԲ. համեմատութեան մէջ
բերուած անունը Βαργατιών = Բերգիտին:

1. Տեսուելն Սելէտորայ Պոստուլան և խոր-
նասցւոյ աղբիւրաց հրատարակ. ի վենետիկ 1893, յէջ
7 և 7Ա:

2. Մենք եղած է Բ վենետիկ, յամին 1729. իսկ միւսն
Ի Ռոմ, 1832ին, վասիլեանի ձեռագրին բազմաաւսմամբ:
3. Պիտիւտ ենք, որ խորնասցի իւր Բ. գրոց ժ.
գիտուն տեղքը Հիպոլիտիտայ և Ափրիկանոսի կեանք
ընդ ժամանակագրութիւններ իսկ եւ յիշէ, էրբև երկն
ժանօք գրութիւններ.

զոր Որոստոսի և Իտատոսի քով կը գտնենք միայն այն՝ ձեռով, ուր կ'ըսեն մեռաւ Վաղենտիանոս, յամի Տեառն 375: Իսկ Զատիկ, ժամանակագրութիւնը, Սոկրատե և Խորենացի ընդհակառակն ունին Βεργιτιων = Բերգիտիոն: Լաւ կ'ըլլար, որ քննադատը նման բացատրութիւններ և ղէպքեր հաւաքելէն աւելի՝ այս տեսակ տարբերութեանց վրայ ուշ զարթընէր: Սակայն մենք Մայլալայի աղբիւրն հետեւեալ գիտողութեան մէջ աւելի ևս պիտի պարզենք:

Սոյն, — այն է ԺԲ. Համեմատութեան մէջ, — սխալ հասկցուած է Խորենացոյ Գ. ԻԹ. գլխում Վաղէսի յաճորդութեան վերաբերեալ ակնարկութիւնն. և ոչ թէ Խորենացի՝ Մայլալայէն մոլորուած՝ Վաղենտիանոսի յաւորեցի կու տայ զՎաղէս: Ասոր ակնյայտնի սպացոյցն արդէն տուած է նա ինքն Մովսէս. զի իւր Գ. գրոց ժԹ. գլխում՝ մէջ կը բերէ Վաղենտիանոսի՝ առ Արշակ գրած թղթոյն պատճենն՝ այսպէս. « Ինքնակալ Վաղենտիանոս Ազատոս, Եւրոբէյ տնօրէնութեամբ և Իտատոս Վաղէս Կայսերա, Արշակայ Հայոց արքայի խնդաւ »:

Կարբերք՝ եթէ այս թղթոյն և Հայոց պատահանոց վաւերականութեան վրայ կը տարակուսի, թող կարգայ Ամ. Մարիեղոսի ժՉ. գրոց Գ. գլուխն և ԺԷ. զբէր ԺԲ. գլուխն, ուր Հայոց այս ժամանակի յարաբերութիւնը յայտնի կը տեսնուին: Ուրեմն՝ Խորենացին՝ ԻԹ. գլխում բարբոսի ուրիշ կարագայով Վաղէսին յաճորդել կու տայ իր եղբոր. այսինքն է, Մովսէս ուզած է ստոն նախ ծառնուցանել, թէ Վաղէս՝ իր եղբոր մահուանէն վերջ՝ 3-4 տարի ևս իր բացարձակ տէր Արևելից թագաւորեց, զոր Գր. Դադիանուցաւոյն հետ՝ ուրիշ մատենագիրք իսկ կը հաստատեն: Երկրորդ՝ եթէ Վաղենտիանոսի վախճանած ժամանակ նորա հնգամեայ որդին Գրատիանոս՝ բացակայ էր Մեդիոլանէն, և ըստ հռովմեական օրինակ անընդունակ կայսերութեան: Ուստի Վաղէս տեսնելով պետութեան սպառնացող վտանգները, անձամբ ուզած է իր ինամակալ մանուկ թագաւորին դործերը վարել: Ստուգել այս մարտի եղելութեան մի սպացոյցը կը գտնենք Արշակայ՝ առ Վաղէս գրած պատճենի հետեւեալ խօսքերում, զորս մէջ բերած է Խորենացի Գ. գրոց ԻԹ. գլխում՝ այսպէս. « Արշակ արքայ Հայոց Մեծաց և ամենայն նախարարաց արամեան ազինս, տեսնն մերում

Ինեմուլէ Վաղէսի Ազատոսի և որոսայ Կատիանոսի խնդաւ »: Իսկ իսկ պիտի տարա կուէն պատճենին վաւերականութեան վրայ, եթէ չկարգայի Որոստոսի և գրոց ԼԳ. գլուխում Վաղէսի մասին հետեւեալը. « Imperium quatuor annis Valentiniano mortuo tenuit. Եւ ի յաճորդն. Gratianus, quadragessimus ab Augusto, post mortem Valentis sex annis imperium tenuit, quamvis jamdudum autea eum patre Valente et cum Valentiniano fratre regnaret », որ խորենացու աւանդածը, — ճիշդ թէ անճիշդ, — կը հաստատէ:

Վաղէսի մահուան մասին՝ յայլակալ կարծիս կը բաժնուին պատմագիրք: Փ. Բուզանդացի՝ Գ. Գպ. գլ. Ժ, և Թէոփանէս՝ առանց պատերազմի և զարմանազանչ հրաշքով մի պատուհասակով եղած կ'աւանդեն: Արոնց ըստ իմք կը համաձայնի Որոստոս՝ Է. գլ. ԻԳ. այսինքն է պարզացոց կողմէն աղայոսի մի համար և Գոթացոց կողմէն աղայոսի զըրկուած գեապանաց ձեռքով հրակէզ եղաւ, կ'ըսէ, առանց տեղը նշանակելու: Ամ. Մարիեղոս՝ երեք կարծիս կը յայտնէ, որոց մին այն է, թէ Ստատիսիանոսի անոր հրակէզ եղած ըլլայ: Զատիկ. ժամանակագրութիւնը, Թէոդորեոս և Սողոմոն՝ Մովսէսի և Մայլալային կատարելապէս կը համաձայնին: Ուստի մենք ուշի ուշով գիտնելով Սողոմոնի աւանդածին պարագաները, կ'ըմանք ըսել, թէ գէթ Վաղէս կայսեր մահուան մասին՝ թէ՛ Մովսէս և թէ՛ Մայլալայ՝ Սողոմոնէն օգտուած են. առաջինը՝ պարզապէս հրդեհը յիշած է, իսկ Մայլալայ անոր մանրամասն նկարագրութիւնն ևս հանդերձ պարագայից մէջ բերած է, ուրոնք միայն Սողոմոնի քով կը գտնուին: Այս բանն դեռ աւելի պիտի բացափայլի կարբիէրի ԺԵ. և ԺՉ. Համեմատութեան, այսինքն է Թէոդորի վերաբերեալ Հատուածոց քննութեամբ:

Այս Հատուածոց վրայ ընդարձակօրէն խօսին իսկ աւելորդ է. վասն զի Մեծին Թէոդորի ծանօթ պատմութեան մի քանի կէտերու յաւաջրերութիւնը են, որք ինչ ինչ տարբերութեան կը գտնուին հին և նոր պատմագրաց՝ քով: Սակայն կարբիէր հոս ալ գտեր է անհերքելի փաստ մի Խորենացոյ Գ. ԻԱ. գլուխը Մայլալայէն փոխ աւանուած լինելուն, այն է անուսն Միտրոսմոն 3, ուր և

2. Որպէսք են, Լիբանիոս, Աբրարիոս, Թէոդորեոս, Զոսիմոս, Սոկրատ, Սողոմոն, Անտիմոս, Թէոփանէս, Կեդրենոս, Զոնարաս, Պրոպոպիոս և վարք Թէոդորի:

3. Հրատարակչաց կողմէն եղած սրբագրութիւն է. 14

1. Այսինքն է լատին լեզբիակա Brigitionem կը գրէ, որուն ՚ տառը Մայլալայ՝ սխալմամբ ՚ տառէն վերջ փոխարած է:

ուր Թէոքոս. և այս անունս միայն Մալա-
լայի քով (յէջ 348 կը գտնուի այսպէս Մի-
ջօւլանոյ)։ Ուրեմն...։

Սակայն դիտել կու տանք, որ Թէոքոսի
ձեռքով կործանուած մեհակնաց մանրամասնու-
թիւնք առ Հասարակ կը գտնուին նաև Սո-
գոմէնի Պատմութեան Է. գրքին մէջ, բաց
յանունէս Միջօլանոյ, որ ըստ իս գրչա-
գրութեան սխալ համարելի է, ինչպէս նաև
Խորենացւոյնը, և պէտք է ուղղագրել ՄԵԾԻՕ-
ՆԱՅՈՒՆ = Մեդիոնայն։ Բայց որովհետև մէկ
կողմէն Խորենացւոյ Հին ձեռագիր չունինք ի
ձեռքին, նորինն ալ իրարու անհամաձայն ձե-
ւեր կը գործածեն. իսկ միւս կողմէն այլ
Մալալայի մի միայն օրինակ գտնուած է ցարդ,
անոր համար մէկ միջոց միայն գտանք, այս-
ինքն է ուրիշ Հայ և յոյն մատենագրաց ձեռ-
քով ուղղել զայն, որոնք առիթ ունեցած են
գաղափարել Խորենացւոյ և Մալալայի յիշեալ
տեղիքը։

Թովմաս Արծրունի 1 մէջ բերելով, — Թէո-
քոսի մահուան մասին, — Խորենացւոյ տե-
ղին, քաղաքը բնաւ չի յիշեր։ Իսկ Յայտնաւոր
(ի ԺԹ և ի ԺԸ Յունուարի) կը գրեն, ոմանք
վասն Թէոքոսի, թէ Հիւանդացեալ Հանգեաւ
ի Մեդիոնայ, ոմանք ի Մեդիոնայ, ոմանք ի Մե-
դիոնայ. իսկ ԺԷ. դարու Յայտնուորք Մե-
դիոնայ կը գրեն. Մեդիոնայն և Մեդիոնայն
բնաւ չի գտնուիր։ Ուրեմն Արծրունւոյ յի-
շեալ տեղէն, — եթէ չիցէ պակասաւոր, — կը
հետևի որ Խորենացւոյ Թ. դարու գրչագրաց
մէջ իսկ քաղաքիս անունը չկար, և թէ ընդ-
օրինակողաց ձեռքով յետ այնորիկ ներմու-
ծուած ըլլայ. և այս բանին կը նպաստէ այլ
և այլ գրչագրաց ձևերու տարբերութիւնը։
Իսկ Հին Յայտնաւորաց մէջ գործածուած
ձևերն առ Հասարակ Մեդիոնայն ձևին աւելի
մօտ են և զայն կը հաստատեն։ Երոյնը կը
նկատենք նաև Մալալայի համար, դիտելով

որ Կեդրեան, Զոնարաս, Թէոփանէս և Պրո-
կոպիոս իրենց նմանարան տեղեաց մէջ միայն
ՄԵԾԻՕՆԱՅՈՒՆ և ՄԵԾԻՕՆԱՅՈՒՆ ձևերը կը գործա-
ծեն։ Արդ, կամ այս հեղինակներս Մալալա-
սէն առած են իրենց աւանդածը, և կամ ոչ.
եթէ առաջինը, ուրեմն պէտք է որ Մալալա-
սայ քով ևս այնպէս 2 գտած ըլլային. իսկ
եթէ երկրորդը, կը հետևի ուրեմն, թէ Մա-
լալասէն դուրս ուրիշ Հնագոյն աղբիւներ ևս
կային, յորս ՄԵԾԻՕՆԱՅՈՒՆ գրուած էր, և Մա-
լալասու առանց բանաւոր պատճառի չէր կարող
փոփոխել զայն։ Իրն յիշեալն այսպէս ըլլա-
լով, կրնանք հետևել Սոսանց երկրայու-
թեան, որ թէ Խորենացւոյ և թէ Մալալայի
աղբիւրք, — Թէոքոսեան Հաստուածոց մասին, —
եղած է Սոգոմէն. բաց աստի ծանօթ ըլլա-
լու են անոնց նաև Թէոփիլոսի և Եւագրի
առ Թէոքոս դրած Թուղթիւնն ևս, — մեհե-
նաց կործանման մասին, — որոնք ճոխագոյն
տեղեկութիւններ ևս կը պարունակէին։

Յօդուածս և Բաղձիւնք անձուկ սահման-
ներ չէին ներեր, որ ընդարձակագոյն ըրն-
նութեամբ ցոյց տայինք Մալալայի և Խորե-
նացւոյ մէջ բերուած տեղեաց անմիջական աղ-
բիւրները, որով ստիպեցանք թողուլ զայն ա-
պագային. բայց մինչև ցարդ եղած դիտո-
ղութեամբ իսկ յայտնապէս տեսնուեցաւ, որ
Կարբիէրի ընծայածէն բոլորովն տարբեր
են իրողութիւնք։ Յաղորդով պիտի ջանանք
պարագաի Խորենացւոյ Պատմութեան այն տե-
ղեաց ուսումնասիրութեամբ, որոնք բացար-
ձակապէս Ե. դարու բնագրոյնը կը կրեն, և
Է. կամ Բ. դարու համար գլխովին անհասկա-
նալի են։

Իսկ Խորենացւոյ գրչագրին ունին մերթ Մեդիոնայ-
ն, Մեդիոնայն, և մերթ Մեդիոնայն, Մեդիոնայն։
4. Տես տպ. Կ. Պրոսպ, 1852. Դպր. Ա. էջ 75.

2. Վասն զի Միջօլանոյ անուն քաղաքի մի նեղքն
անգամ չկայ այնպիսի քաղաքական բառարանաց մէջ. կը
ցանկայինք, որ կարբիէր իւր դրած այդ նոր քաղաքի
տեղը մեզ ցոյց տար, և կամ քաջաբար, թէ ծանօթ
Թէոքոսանն ինչպէս Մալալայի քով Միջօլանոյ եղած
է, և առ Խորենացւոյ Մեդիոնայն, կամ Մեդիոնայ-
նակի փոխուած, զի տուած պատճառն անբաւական է։

